ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 665-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» _____ 2025 թվականի N _____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 665-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 2 հավելվածի 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-րդ կետով.

«7.1. Օդային երթևեկության կառավարման կարգավարի վկայական ունեցող աշխատողի աշխատանքային ստաժը հաշվարկելիս աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառվում է երկու գործակցի կիրառմամբ:»։

2. Որոշման N 5 հավելվածի 3-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Օդային երթևեկության կառավարման ծառայության կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող աշխատողներ ։»։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

4. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը օդային երթևեկության կառավարման ծառայության կարգավարի վկայական ունեցող աշխատողներին նշանակված կենսաթոշակները վերահաշվարկվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից՝

անկախ քաղաքացու դիմելու հանգամանքից։

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ **Ն. Փաշինյան**

ք. Երևան